# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**12 օգոստոսի 2022 թվականի N 320-Ա**

**«ԴԱՐԲԱՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ՌՈՒԲԵՆ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՎԱՐԴԻԹԵՐ ՍԱՆԹՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 7-ի ՎԴ1/0011/05/18 քաղաքացիական գործով ուժի մեջ մտած վճիռը և Ռ. Զաքարյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. «Դարբասի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտրված տնօրեն Ռուբեն Զաքարյանի հետ 2022 թվականի օգոստոսի 15-ից կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:
2. 2022 թվականի օգոստոսի 15-ից լուծել «Դարբասի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնը զբաղեցնող Վարդիթեր Սանթրյանի հետ 2018 թվականի մայիսի 8-ին կնքված N 11 աշխատանքային պայմանագիրը:

12.08.2022

X

ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2022թ. օգոստոսի 12
ք. Կապան